ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE08-90DB-4ED9-BCFB հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4902/02/24 ք. Երևան
27 Նոյեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիականդատարանի(այսուհետնան՝Դատարան) դատավոր Տիգրան Գրիգորյանս, ծանոթանալով թիվ ԵԴ2/4902/02/24 քաղաքացիականգործի նյութերին,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի (դատավոր՝ Ա.Սաֆարյան) վարույթում է գտնվել քաղաքացիական գործն ըստ հայցի «Ագաստ» ՍՊԸ-ի ընդդեմ «Տիգրան Մեծ» ԱԿ ՓԲԸ-ի՝ 16.01.2024թ. կնքված թիվ «Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-24/02-ԴԵՂ-2» ծածկագրով պայմանագրի միակողմանի (որոշ չափաբաժինների մասով) լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային համակարգով քաղաքացիական գործը 26.11.2025թ. վերամակագրվել է դատավոր Տ.Գրիգորյանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը

վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
Վերոգրյալի հիմամ վրա՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ, դրա քննությունը շարունակել ընդհատման պահից և նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

Քաղաքացիական գործն ընդունել վարույթ, քննությունը շարունակել ընդհատման պահից և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 22.12.2025թ.:

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.11.27 10:57:27 AMT

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am